

File

Saint Sarkis Armenian Apostolic Church



300 9th STREET
NIAGARA FALLS, N. Y. 14303
Phone: 282-2587

Ս. ՍԱՐԳԻՍ ՆԱՅԱՍԱՆԵԱՅՑ
ԵԿԵՂԵՑԻ
ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼՍ

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին Բարեխնամ
Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին


Յուլիս 29, 1978

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Զեր փափաքին համաձայն, կ'առաքեմ Ձեզ Եկեղեցւոյ Յուլիս
ամսուան ամսաթերթիկը: Սա երրորդ թերթիկն է որ տպագրած եւ ցրած ենք ժողո-
վուրդին, իմ նիակարա փուլ գործուղուելէս վերջ: Անշուշտ մտադիր ենք հետզհետէ
թերթիկը ճոխացնել եւ որակաւորել: Ցարդ, եկեղեցւոյ թերթիկը անանուն էր: Այս
պարագան ուշադրութիւնս գրաւել է ետք, ծխական խորհուրդի անդամներուն առաջար-
կեցի անուն մը դնել թերթիկին: Ծխական խորհուրդը խնդրեց, որ անձամբ՝ ես որոշեմ
պատշաճ եւ յարմար անուն մը: Առ ի երախտագիտութիւն մեր Մայր Աթոռ եւ դարաւոր
Ս. Էջմիածնին, որտեղ մեր խոպան միտքերը մշակուեցան, որտեղ կերտուեցանք եւ կոփ-
ւեցանք մարմնապէս ու հոգեպէս, առաջարկեցի ամսաթերթիկը կոչել «ԷՉՄԱՍԻՆ»: Բո-
լորը ուրախութեամբ համաձայնեցան:

Ահաւասիկ Սրբազան Հայր, այս անգամ Ձեզ կ'առաքենք «ԷՉՄԱՍԻՆ»
ամսաթերթիկի առաջին համարը: Այս առնչութեամբ, յառաջիկայ մեր թերթիկին մէջ
ժողովուրդին պիտի անդրադարձնամ եւ կարգ մը բացատրութիւններ տամ:

Շուտով պիտի առաքենք Ձեզ Եկեղեցւոյ ծխական խորհուրդի
ժողովներուն ատենագրութիւնները, արդէն մեքենագրուհի մը գտած եմ:

Մատչիմ Ձերդ Ս. Աջոյն՝

Վաչէ Սարկաւազ Նալպանտեան



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան հանդերձեալ է քահանայ ձեռնադրելու Բրշ. Յակոբ Սրկ. Նալպանտեանը եւ Բրշ. Վաչէ Սրկ. Նալպանտեանը:

Յակոբ Սրկ. Նալպանտեանի Վոչումն Քահանայութեան՝ Կարգը տեղի պիտի ունենայ Շաբաթ Սեպտեմբեր 16, 1978, երեկոյեան ժամը 7.30ին՝ Սիրաքիւսի Ս. Պօղոս Եկեղեցւոյ մէջ: Ձեռնադրութիւն եւ Օծում՝ Կիրակի Սեպտեմբեր 17, առաւօտեան ժամը 10.00ին՝ Ս. Պատարագի ընթացքին:

Յակոբ Սրկ. Նալպանտեան ձեռնադրութենէն ետք պիտի ստանձնէ հոգեւոր հովուութիւնը Սիրաքիւսի Ս. Պօղոս Եկեղեցւոյ:

..

Իսկ Վաչէ Սրկ. Նալպանտեանի Վոչումն Քահանայութեան՝ Կարգը տեղի պիտի ունենայ Շաբաթ Սեպտեմբեր 23, 1978, երեկոյեան ժամը 7.30ին՝ Նայակարա ֆոլգի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ: Ձեռնադրութիւն եւ Օծում՝ Կիրակի Սեպտեմբեր 24, առաւօտեան ժամը 10.00ին՝ Ս. Պատարագի ընթացքին:

Վաչէ Սրկ. Նալպանտեան ձեռնադրութենէն ետք պիտի ստանձնէ Նայակարա ֆոլգի Ս. Սարգիս Եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնը:

Խարտաւիլակի պաշտօնը պիտի կատարէ Հոգշ. Տ. Խաժակ Վրդ. Պարսամեան:

Հաւատացեալ ժողովուրդի աղօթքը կը խնդրուի վերոյիշեալ երկու ընծայացուներուն համար՝ որպէս զի Տէրը զիրենք ՝Մշակ առանց ամօթոյ արասցէ՝:

ԴԻԻԱՆ ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Սեպտեմբեր 12, 1978
Նիւ Եորք, Ն.Ե.

Niagara Falls

Ո Ր Ո Ց Հ Ա Ս Ց Է Գ Ի Ր Ս

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏՕՆԵՒՑ ԵՒ ԺՈՂՈՎՐԹԱԿԱՆԱՑ. ՈՂՋՈՅՆ:

Ուրախ ենք գրովս յայտնելու որ նիւ Եորթ նահանգի ՆԻՍԿԱՐԱ ՅՈՂԱ թաղաքի Հայ հասարակութիւնը՝ Հայոց Ս. Եկեղեցւոյ սիրովը վառուած՝ եւ զանկանալով իրենց հայրերուն քրիստոնէական հաւատքը անշէջ պահել՝ ձեռնարկած է եկեղեցիի մը շինութեան, եւ առ այդ հող մը գնած եւ եկեղեցւոյ շէնքի մը շինութեան համար կարեւոր գումար մը գոյացուցած է տեղւոյն Հայոց մէջ հանգանակութեամբ:

Սակայն համայնքին անդամները առատաձեռնութեամբ մասնակցելով հանդերձ՝ կատարուած հանգանակութենէն յառաջ եկած գումարը տակաւին անբաւական է առաջադրուած համեստ ձեռնարկը ի գլուխ հանելու: Հետեւաբար կարիքը կը զգացուի դիմելու մեր Վիճակին միւս համայնքներու եկեղեցասէր անձանց որպէսզի օգնեն նոր եկեղեցւոյ մը շինութեան գործին:

Նիակարա Ֆոլսի մեր համայնքի պատուական անդամներէն Պր. ԽՈՍՐՈՎ ԹՈՒՐԻԿԵԱՆ եւ Պր. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՍԱՏՈՒՐՇԱՆ նշանակուած են եւ պաշտօն ունին վերոյիշեալ նպատակաւ դիմելու մեր Վիճակի ազգայիններէն եկեղեցասէր անձանց նիակարա Ֆոլսի եկեղեցւոյ շինութեան համար օգնութիւն ստանալու:

Վերոյիշեալ ազգայիններուն ի պահանջել հարկին պիտի գործակցի նաեւ նոյն համայնքի պատուական անդամներէն Պր. ԼԵՒՈՆ ՏԷՐՅԱԿԻԱՆ

Մեր Վիճակի հովիւներուն եւ հոգաբարձութեանց կը յանձնարարենք կարելի եղած չափով դիւրութիւն ընծայել վերոյիշեալ ազգայիններուն՝ իրենց պաշտօնը յաջողութեամբ կատարելու համար:

Հայցելով Տիրոջ օրհնութիւնը ամէնուրեք վրայ՝

Մնամք հայրական սիրով
Աղօթարար

Առաջնորդ Հայոց Ամերիկայի